ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Խորհրդի նախագահ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոս, 2024 թվականի N 25-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2024 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

1. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Մանյա Սարդլիշվիլիի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձ նշանակելու մասին հարցը:
2. Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 89-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

15 օգոստոս, 2024 թվական
ք. Երևան